

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Որդին



Written by: Edward Hughes

Illustrated by: Lazarus

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

Adapted by: Ruth Klassen; Sarah S.

Story 45 of 60


www.M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.


Հայերէն

Armenian



Առաջին
պատմութիւնը
մարդու մը
մասին,

որ հարիւր
ոչխար ուներ:
Մէկ հատը
կորսուեցաւ:



3

Արագօրէն
հովիւը ձգեց
ինչոտնիկը
եւ գնաց

փնտռելու
համար
կորսուած
ոչխարը:



4

Հովիւը փնտռեց
եւ փնտռեց մինչեւ
որ գտաւ ոչխարը:
Յետոյ իր ուսերուն
վրայ առաւ եւ
ուրախօրէն տուն
տարաւ: Ան իր
ընկերներուն
պատմեց.

"Հետս ուրախ
եղէք, որովհետեւ
գտայ իմ
կորսուած
ոչխարս":

5

Յիսուս
բացատրեց, որ
մեծ ուրախութիւն
կ'ըլլայ երկինքին
մէջ, երբ մէկ
մեղաւոր ետ
դառնայ:



6

Յիսուսի յաջորդ
պատմութիւնը
կնկայ մը մասին
էր, որ տասը
արծաթ դրամ
ունէր թերեւս իր
կեանքի բոլոր
հաւաքածը:
Յաւալի բան մը
պատահեցաւ: Ան
իր մէկ արծաթը
կորսնցուց:




7

Վա՛յ, վա՛յ, վա՛յ: Կինը ամէն տեղ
փնտռեց: Վերջապէս ան գտաւ իր
կորսնցուցած արծաթ դրամը: Ան
շատ ուրախ էր: Գիտե՞ք ինչ ըրաւ
ան: Այո, ան պատմեց իր բոլոր
բարեկամներուն:




8



Նորէն Յիսուս ըսաւ.
"Երջանկութիւն կայ Աստուծոյ հրեշտակներուն ներկայութիւնը մէկ մեղաւորի վրայ, որ կը գոջայ":


9

Երրորդ պատմութիւնը, զոր Յիսուս պատմեց տխուր պատմութիւն մըն էր: Ան կը խօսեր տղուն մը մասին, որ իր հօրը տունը ձգեց:




10

Հեռու երկրի մը մէջ տղայ մը իր բոլոր դրամները անխելքօրէն ծախսեց: Հիմա ի՞նչ ընել: Աւելի բարդացնելու համար կացութիւնը, սով ալ կը տիրէ: Տղան անօթի կը մնայ մինչեւ մահ:




11

Յուսախաբ եւ անօթի, տղան խոզեր կերակրելու գործ մը կը գտնէ: Բայց մէկը զինք չի կերակրեր: Ան շատ սիրով պիտի ուտեր խոզերուն կերակուրէն: Թերեւս ալ կերաւ:



12

Վերջապէս տղան ինքզինք կը գտնէ, եւ խելքը կ'աշխատցնէ: "Հօրս տունը, նոյնիսկ սպասաւորները լաւ կ'ուտեն" կը մտածէ:



13

"Ես տուն պիտի դառնամ հօրս ըսելու, որ ներքէն ինծի իմ գործած մեղքերուս համար: Ես այլեւս արժանի չեմ իր տղան ըլլալու: Յուսամ, որ ան զիս իբր սպասաւոր քովը կ'աշխատցնէ":




14

Մինչ տակաւին տղան հեռու էր իր հօր տունէն, անոր հայրը տեսաւ զինք: Ուրախութեամբ լեցուած, հայրը տուն դարձող տղուն քով վազեց: Ան համբուրեց եւ փաթթուեցաւ անոր:




15

"Չայրիկ, ես մեղք գործեցի: Ես արժանի չեմ քու տղադ ըլլալու", Տղան կ'ուզէր, որ հայրը զինք իբրեւ ծառայ քովը աշխատցնէ:



16

"Սակայն հայրը միջամտեց, բերեց ամենալաւ զգեստները եւ ոտնամանները, եւ մատանի իմ տղուս, եւ մեծ խրախճանք պատրաստեցէք":



17

Չաճելի խրախճանք մը սարքուեցաւ տղուն համար, որ կորսուած էր եւ գտնուեցաւ:

Յիսուս, պատմեց այս պատմութիւնը, որպէսզի ցոյց տայ, թէ Աստուած որքան կը սիրէ մեղաւորները, որոնք զոչում կը կատարեն եւ իրեն կը դառնան:



18

Որդին

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ղուկաս 15

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կէտնքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կէտնք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

